ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 242- Ա

11 մարտի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 273-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի>> 15-րդ կետի պահանջը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 18-ի <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Դպրաբակ գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007 թվականի ապրիլի 26-ի N121-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N273-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ որոշման 1-ին կետում

1)<<Նազլուխանյան Հովհաննես/վերադասի ներկայացուցիչ՝ համաձայնությամբ/>> բառերից հետո լրացնել <<երեք տարի ժամկետով>> բառերով.

2)<<Վարդանյան Գուրգեն/վերադասի ներկայացուցիչ՝ համաձայնությամբ/>> բառերից հետո լրացնել <<երեք տարի ժամկետով>> բառերով.

3)<<Նազլուխանյան Հարություն/ՏԻՄ ներկայացուցիչ/>> բառերը փոխարինել <<Նազլուխանյան Նունե Արտեմի/ՏԻՄ ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով>> բառերով.

4)<<Հայրապետյան Անուշ/ՀՀ ԿԳՆ ներկայացուցիչ/>> բառերը փոխարինել <<Խոջայան Գրիգոր Նիկոլայի/ՏԻՄ ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով>> բառերով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ